



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք

16-րդ փետրվարի 2024թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2 ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 16 անդամներ:

Բացակա էին՝ Կարեն Մանասերյանը, Եղիշե Նազարյանը, Մարատ Շահրաբյանը, Արմեն Վարդանյանը և Ռոմիկ Վարդանյանը:

Նիստին մասնակցում էին՝

Գլխավոր բնակավայրի վարչական ղեկավար Սամվել Օրդոյանը, Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Հայկանուշ Ավագյանը և աշխատակազմի գլխավոր մասնագետ Քրիստինե Պողոսյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը

Լսեցին.

ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

